

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-ԻՆ
ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ
ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Խորհրդի անդամներ՝

- Ա. Գևորգյան ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
- Գ. Բեգլարյան ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
- Հ. Թովմասյան ՀՀ արդարադատության նախարար
- Ե. Զախարյան ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
- Կ. Մինասյան ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
- Ն. Երիցյան ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
- Ա. Հովսեփյան «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն

Հրավիրվածներ՝

- Մ. Մելքումյան ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
- Ա. Զանջուղազյան ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետ
- Կ. Արեյան Երևանի քաղաքապետի տեղակալ
- Դ. Սարգսյան ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
- Լ. Հունանյան ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
- Ս. Տոնոյան ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի

պաշտոնակատար

- Վ. Պողոսյան << կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
- Է. Ավետյան << ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն
- Ա. Բադալյան «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ, ծրագրի ղեկավար

1. «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր (Տրանշ 1)» (հատուկ գործողություններ) վարկային համաձայնագրի շրջանակներում Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի երկու ճանապարհային հանգույցների մանրամասն ճարտարագիտական նախագծման, շինարարության կառավարման և վերահսկման խորհրդատուի բանակցված պայմանագրի հաստատում

(Ա. Բադալյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) առաջարկել Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանին հաշվի առնել << կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյանի առաջարկությունները.

2) հաստատել Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի երկու ճանապարհային հանգույցների մանրամասն ճարտարագիտական նախագծման, շինարարության կառավարման և վերահսկման խորհրդատուի բանակցված պայմանագիրը:

2. «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր (Տրանշ 1)» (հատուկ գործողություններ) վարկային համաձայնագրի շրջանակներում անցկացված Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի երկու ճանապարհային հանգույցների մանրամասն ճարտարագիտական նախագծման, շինարարության կառավարման և վերահսկման խորհրդատուի միջազգային բաց մրցույթի արդյունքները հաստատելու մասին» << կառավարության որոշման նախագծի մասին

(Ա. Բադալյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ, ծրագրի ղեկավար Ա. Բադայանին՝ ՀՀ արդարադատության նախարար Հ. Թովմասյանի դիտողությանը համապատասխան

1) խմբագրել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի և Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրերի մասին կառավարման խորհրդի նիստի որոշման նախագծի 2-րդ և 3-րդ կետերը.

2) ՀՀ կառավարության որոշման նախագծի նախաբանում հղումը կատարել ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասին.

3) վերջնական լրամշակված տարբերակը ներկայացնել առաջիկա ՀՀ կառավարության նիստի քննարկմանը:

3. Այլ հարցեր

(Կ. Արեյան, Կ. Մինասյան, Տ. Սարգսյան)

1. Հաստատել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի առաջարկած սկզբունքն այն մասին, որ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի ծրագրի իրականացման խմբի պաշտոնական դրույքաչափերը պետք է ցածր լինեն «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի համապատասխան պաշտոնական դրույքաչափերից:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետի տեղակալ Կ. Արեյանին՝ իր իսկ առաջարկությանը համապատասխան՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանի հետ համատեղ մեկօրյա ժամկետում քննարկել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի ծրագրի իրականացման խմբի պաշտոնական դրույքաչափերի սանդղակը և ներկայացնել վերջնական տարբերակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԿԱՐԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ